

րաց, խողի մը և ձկոյ մը վրայ: Որպէս
զի այս կենդանիք առողջութիւննին ըս-
տանան, պէտք է ուրիշ պատուաստ մի
ալ ընել 15 օր վերջը: Հիւանդութեան
առաջին հարուածէն անջնաս մնայը
ստուգելու համար, 40 օր վերջը կեն-
դանեաց մաս մը պիտի պատուաստի
բուն ելընդային պատուաստով, և տեւ-
նելու համար թէ արդեօք առողջու-
թիւննին երկրորդ հարուածի մ'ալ

կ'ընդդիմանայ թէ ոչ՝ երկու ամիս վեր-
ջը դարձեալ պէտք է պատուաստել:

Կը յուսանք որ նաև բոլոր փոխա-
դրական հիւանդութեանց աղդակներն
ալ գտնուին, և զանոնք նորանոր պա-
տուաստիք փոխանակեն, և ահա այս
անտարակոյս պիտի ըլլայ գիտութեան
ամենամեծ բարիքն՝ առ տառապեալ
մարդկութիւնն:

Մ Ա Ն Շ Ի Ա Ն Յ Ք Ն

Մերձաւոր ժամանակաց մէջ մար-
դուս մեծագոյն գործը պիտի ըլլայ Մանչի
ենթածովեայ անցքն, որով Գաղղիոյ և
Անգղիոյ ակունքն մէկմէկու հետ պիտի
միանան, Գալէի գծով: Ասոր քով մեծ
բան մը պիտի չերենան Ալպեանց անց-
քըն և պարանոցաց հատումն. — որոնք
որչափ ալ մեծամեծ դժուարութեանց
գործ ըլլան, բայց ասոր չափ յանդուգն
և հոյակապ շինուածք չեն. այսպիսի
ենթածովային ճամբայ մը, որ երկու
տէրութիւնք իրարու հետ կը միացընէ
դէմ առ դէմ, այսպիսի ճամբայ մը կըր-
նայ միայն հին ժամանակի մեծամեծ
շինուածոց հետ համեմատել. — հնդ-
կային մահեաններն, եգիպտական շի-
րիմներն և հռովմէական ջրմուղներն:

Եւ մինչդեռ քանի մը տարի առաջ
յանդգնութիւն և անգործագրելի ցնորք
մը կ'երևար, կարծուածէն աւելի շու-
տով պիտի լմննայ: Արդէն նախնական
գործերը սկսած են. պատրաստուած
են նաև ճարտարապետական մէքե-
նայք և ճարտարապետք գծագրած են
արդէն թղթի վրայ ձեռնարկութեան
ամենամանր տեղեկութիւնք հանդերձ
ամենայն ծախիւք: Եւ Անգղիոյ օրա-
գիրքը, Անգլին կամ փողոյն համար ե-
ղած վիճից առթիւ, ինչպէս ետքը պիտի
խօսինք, իրենց սիւնակները կը լեցընեն
մանրամասն տեղեկութիւններ տալով
անցքին և դայիկոնաց ծովուն անդուն-
դին մէջ գործած ճամբուն վրայ:

Անցքին պեղման համար Ռայլ-
վուայ Ընկերութեան ճարտարապետ-
ներուն ձգած գիծը Անգղիոյ կողմէն,
Շէյքսբիք ըստած ժայռին քով կը սկսի,
Ֆրէքսգոնի և Տոմրի միջոց, և կը հասնի
գաղղիական ծովեզերքը կրի-նէ հը-
րուանդանին քիչ մը արևելեան կողմը,
Սանկադի մէջ:

Նախ սկսեր են դադարեալեայ
հոր մը փորել. որուն մէջ կ'իջնեն մետա-
ղեայ վերելակով, ինչպէս կ'ընեն հան-
քաց մէջ, որ շոգեշարժ մեքենայով մը
կը բանին: Այս խորութիւնը, յայտնի է,
փորուելիք խաւերու երկրաբանական
ծանօթութեան համար է. երբ սկսին
շոգեկառօք առաջ երթալ անցքին մէ-
ջէն, խոտորնակի քիչ մը զառ 'ի վայր
սրահ մը պիտի շինուի (ինչպէս 14 առ
80), որ երկրիս խորէն քանի մը հա-
զարամեղր տեղ պիտի կտրէ — կարճե-
ցրեւելով այսպէս Լանտա երթալու ճամ-
բան: Հիմակուան փորուած հորին
խորութիւնը գրեթէ 60 մեղր է, անտի
ուղիղ անկամաք նուազ զառ 'ի վայրով
դէպ 'ի գաղղիական ծովեզերքը կ'եր-
թայ, իր և Մանչ ծովուն գոռ ալեաց մէջ
երեսուն մեղր թանձրութեամբ ժայռ
մը թողլով: Ենթածովեայ Անցքին սրա-
մագիծը եօթն անգղիական ոտք է, որ
քիչ ատենէն կրկին պիտի ըլլայ:

Հազիւ թէ սկսան անցքին քննութիւն-
ները ընել, շուտ մը դայիկոնին պէտ-
քը զգային: Գիտեն ամենքը թէ այս.

պիտի յարմար գործիք մը, այսպիսի պարագաներու մէջ շատ կարևորութիւն ունի:

Ոչ Չէնիզիոյի, ոչ կողարտին փողը ինչուան հիմայ պիտի լինային եթէ ունեցած չըլլային ճշեալ օգոյ զարմանալի մեքենաներ, որ այնչափ նկարագրութեանց և դովութեանց արժանի եղանկ Պոմոն հազարապետը — վերատեսուչ աշխատութեանց Անգղիոյ կողման, իր անունը դրաւ այն գործւոյն՝ զոր կը սկսինք նկարագրել: Այս իրաւացնէ ամենակատարեալ գործի մ'է մեքենա, կան, շարժիչ գորութիւնը միշտ ճշեալ օգն է, ինչպէս 'ի կողարտու, որ ամեն կողմէն յաջողութեամբ չողւոյն և մարդուն բազկաց տեղը բռնեց: Մեքենային ամբողջ երկայնութիւնը 11 մեղր է: Պողպատէ առանցք մը երկու թևերով իր կեդրոնին վրայ կը դառնայ, և պատշաճապէս յարմարացուցած պողպատէ 14 զօրաւոր ծայրեր ունի, որոնցմով մէկ շաբթուան մէջ 90 մեղր առաջ կ'երթայ, բայց կամաց կամաց դեռ աւելի պիտի արագի. առ այժմ գայլի կոնն մէկ վայրկեանի մէջ երկու երեք շրջան կ'ընէ, — որով ըսել է թէ ամեն վայրկեան մէկ լթաչափ կը յառաջանայ, — բայց Պոմոն գնդապետն կ'ըսէ թէ իր գործին $\frac{5}{8}$ բթաչափի կոնայ յառաջել ամեն մէկ շրջան ընելուն, և վայրկեանը հինգ շրջան ընել. որով ներկայ արգիւնքս իրաւացնէ պիտի կրկնականատի: Վերջապէս Անգլիոյ երկայնութիւնը 15 հազարամեղր ըլլալով այնչափ տեղ երթալու համար գրեթէ եօթն տարի պէտք է, — երկու հազարամեղրէն աւելի հաշուելով մէկ տարուան մէջ դիւրաւ կտրուելիք ճամբան: Այս եօթըն տարիներու ալ կրնան կէսի վերածուիլ, թէ որ ուրիշ գայլիկուն մը միանգամայն գաղղիական նաւահան գըստէն մեկնելու ըլլար և գիտութեան անսխալ լուսով առաջնորդեալ յառաջէր գետնափոր աղլամիլին մէջ, քնադէտք մեծ վատահութիւն ունին գորշ գածին գանուելուն վրայ, որ պիտի միայնէ կ'ըսեն անգղիական ծովեզրը,

կամուրջի պէս, գաղղիական եզերաց հետ. — իրաւացնէ հրաշայի կամուրջ մ'է, զոր բարեպաշտ Անգղիացիք մեծաւ ծանրախոհութեամբ կը հաստատեն թէ Աստուած կամաւ ստեղծած ըլլայ, յաջողութեամբ պատկերու համար Ռայլիուայ ենթաճովեայ ընկերութեան ձեռնարկութիւնը:

* *

Այս ճամբան, ինչպէս ըսինք, 14 տեղ գիական ոտք տրամագիծ պիտի ունենայ (գրեթէ 5 մեղր), տափակ մակերևութով, ձողերը վրան հաստատուելու համար: Ներսի կողմէն երկու ոտք թանձրութեամբ (70 հարիւրդամեղր) ջրաբաշխական շաղխով ծնիւած է, — որ նոյն փորուած գածէն կը շինուի. անգղիական առակաւոր խնայութիւնն երբէք չի ստեր:

Իւրաքանչիւր կողմը 1էն մինչև 8 գառ 'ի վայր պիտի ըլլայ, ինչուան որ ծովուն յատակէն 60 մեղր խորութեան հասնի. անկէ ետքը ուղիղ գծով պիտի երթայ. յայտնի է՝ շեղելով ուր ջրոյ խաղեր հանդիպին: Անգլիոյ հովանարութիւնն, որ մեծ մոտահողութիւն կրնայ պատճառել, ընդ հակառակն աշխարհին ամենէն պարզ գործերէն մին է: Աշխատութեանց ժամանակ, օգն որ անհրաժեշտ կարևոր է, առատօրէն պիտի մատակարարուինոյն ծակող մեքենայով, որ ինչպէս ըսինք, կը շարժի ճշեալ օգոյն գորութեամբ: Կողարտուսի մեքենային յար և նման. Անգլիոյ բերանները ահագին ճշշիւներ պիտի դրուին, և օդը երկաթէ խողովակաց մէջէն պիտի անցնի երթայ ինչուան ճամբուն կեդրոնը: Երբ այս ճամբան բացուի, վաճառականութեան շոգեկառք ալ ճշեալ օգոյ մեքենայիք պիտի փոխադրուին, Պոմոնի գորութեամբ: Շարժական մեքենայն 60էն ինչուան 70 տակառաչափ պիտի կշռէ, և պիտի ամփոփէ 1200 խորանարդ ոտք օգոյ և 70 մթնոլորտի ծանրութեամբ ճշշուած, որ է ըսել 80,000 խորանարդ ոտք ազատ օգոյ: Այս գորութիւնը բաւական է

150 տակառայաւի ծանրութեամբ չոգեկառք 15 հազարամեդր տեղ տանիլ ծովուն տակէն: փորձը կը ցուցնէ թէ մեքենայէն դուրս ելած օդը գրիթէ կրկին 2000 խորանարդ ոտք պարզ և մաքուր օդ պիտի տայ, — շատ աւելի քան որչափ հարկաւոր է անցորդաց երկայն կառաշարի մը քիմիական սպառման համար:

Շողեկառք պիտի ունենան միշտ չափաւորեալ զօրութիւն մը, որպէս զի կարենան նախատեսել ո՛ր և է արդեւք մը, որուն կրնան հանդիպել ճամբորդութեան ժամանակ: Բայց որպէս զի աւելի ապահով ըլլան շողեկառք, փողոյն երկայնութեամբը երկաթէ խողովակներ պիտի դրուին շատ մթնոլորտով ճրնչեալ օդոյ ծանրութեամբ լեցուած, և ասոնք տեղ տեղ մէկմէկէ քիչ հեռու աւազաններ պիտի ունենան, որպէս զի դիւրաւ կարենան մեքենայք ճնշուած օդ ամբարել. ինչպէս այսօրուան օրս կ'ընեն նոյն գործը սովորական շողեկառք ջրոյ համար:

Սակայն քանի մ'ամիս առաջ մէկ

քանի անգղիացի սպայից տաք վիճաբանութեան նիւթ եղաւ Անգլիոյ, իւրու թէ ասիկա Անգլիոյ թշնամեաց ասպատակութեան ճամբայ մը պիտի ըլլար: Լսրտ Տընսէնի ծովապետն առաջինն եղաւ այս կասկածը հանելու, որուն հետեւեցաւ Սըր Կարնէդ Ուելլէյ՝ Աշանդաց, Զուլուներուն և Եգիպտոսի յաղթողը, Մեծին Բրիտանիոյ երեւելի զօրապետն: Ուստի սաստիկ վէճ մը զինուորական թերթերու, մանաւանդ թէ բոլոր լրագրող վրայ և ինչուան անգղիական Խորհրդարանին մէջ, 'ի պաշտպանութիւն կամ 'ի հակառակութիւն Անգլիոյ:

Առանց բնաւ պատերազմական գիտութեան և ոչ ալ զարմանալի սրատեսութեան՝ կրնանք կանխատեսել թէ յաղթութիւնն որուն պիտի ըլլայ:

Եթէ յարմար տեղեր քանի մը ականներ գրուելու ըլլան, ինչպէս են Չենի, զիոյի փողոյն մէջ, կարծենք թէ կղզեցի պատերազմողներուն երկիւղը կը փարատի, և իրենց գործն ալ անխախտ կը մնայ ցորչափ աշխարհս տես:

Թորացաւի դեղ. — Թորացաւը սաւառիկ ծանր և սովորական հիւանդութիւն մ'ըլլալով, հարկաւոր կը համարինք ծանուցանելու նոր դարման մը ընդդէմ այն մահաբեր ախտին:

Պ. Տըպոն բժշկութեան ճեմարանին՝ Թորացաւ ունեցողաց անդեան վրայ՝ իր դատած մէկ գիւտը ներկայացուց, ուսկից շատ օգուտ քաղած էր:

Տըպոնի գրութեան համեմատ, թորախտութիւն ունեցողին պէտք չէ կըտրատեալ, այլ փոշիացեալ միս տալ: Այս փոշին պէտք է լուծել կաթի մէջ, և օրը 200 կրամ մատակարարել: Պ. Տըպոն կը ծանուցանէ փորձով, որ այն ամեն վերնոտներն զորս ինքը խնամած էր իր գրութեամբը՝ 'ի Պիսեդը, քիչ ժամանա-

կի մէջ զգալի դիրացած էին: Ամեն օր իրենց կը խմցնէր 3 լիտր կաթ, 200 կրամ փոշիացեալ միս և չափ մը ոսպ: Իսկ փոշիացեալ մսին գալով, այս է իր գրութիւնը: Հում միսը կը ճնշէ տեսակ մը մամուլ, և հիւթը մէջէն կը հանէ, և կը դնէ 'ի պահեստի. մսին մնացորդը կը գրուի վառարանի մը մէջ, յետոյ չորցնելով, փոշիացնելով և նուրբ մաղէ անցընելով, կը դառնայ անշոշափելի փոշի մը, զոր խառնելու է կաթի, հակվիթի և ուրիշ նիւթոց հետ: Գրեթէ 2 քիւլոյ միս կարեւոր է 200 կրամ փոշի ստանալու համար. իրացընէ աժան կերակուր մը չէ, սակայն բերած օգուտը մտածելով՝ գործածութեան արժանի է: